ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՀԱՅՔ

"Ուր զաճՃ ձեր են, անդ եւ սիրտ ձեր եղիցին,, Աւետ.

Մինչեւ Ս. Էջմիածնի ոնը, ի՞նչ դիրք, ո՞րպիսի եղանակ և օդ և այլն ունեցած լինելը ճառել չէ՛, այլ Էջմիածինը Հայոց, և Հայք Էջմիածնի նկատմամբ ի՞նչ պարտաւորութիւններ որ կը կրեն, զայնս իմացունել է համառօտ։ Ազգի համառօտ, ըստ որում լիովին և մանրաշնին քննութեամբք եթէ հարկ լինի իմանալ երկու կողմանց պարտաւորութիւնները հանդերձ զանազան ու կարևոր պարագայիւք պարտ է արդարև՝ ստուար հատոր մի աշխատասիրել։ Այց 'ի վերայ այսր ամենայնի՝ դարձեալ սոյն համառօտութեանս բովանդակութեան մէջ կարևոր ու գլխաւորները կը ներկայանան, որոնք և անտարակոյս սիրելի ընթերցողաց մանաւանդ թէ ճշմարիտ ազգասիրաց՝ սակաւ օգուտ և արգասիք չեն ընծայեր։

Արդ արժան է գիտել, որ այսօր Հայք՝ Իրեանց Ազգութիւնը մի միայն կրօնական կապով են ամրապնդած և պահպանած։ Ուրեմն դիւրին կը հետևի՝ թէ մեք Հայքս՝ կրօնական ազգ այժմ կը կազմենք, քանզի կրօնքն է մեզ պաշտպան, պահապան, փրկիչ և կեցուցիչ։ Ընդգրկենք ուրեմն և սիրենք կրօնքը հոգւով և մարմնով, որպէս զի արժանանանք գտանել փրկութիւնը։

Այց ի՞նչպէս — ։

Այն ազգեր՝ Իրեանց էութիւն ու պահպանութիւն և յարատևութիւն անշուշտ գլխաւոր կեդրոններ պարտաւոր են ունենալ. ինչպէս մարդկային մարմինները պետ և կառավարիչ ունին սիրտը։ Որպէս զի աշատ՝ եթէ ոչ բոլորովին, գէթ Իրեանց կատարելութեան կարևոր պարագայքը և պարծանքները անվնաս պահպանեն և յարատև զարգացնեն. առանց որոյ յիրաւի՛ կասեմ, անհնարին է կատարելութեան փառքը վայելել և յառաջադիմութեան բարիքը միանգամայն ընդգրկել։

Ուրեմն՝ ինչպէս ուրիշ համայն ազգերը, նոյնպէս և Հայ—ազգը այո՛ պէտք է ունենայ ազգութեան և կրօնին միայնդամայն մի կեդրոն, որպէս զի կարողանայ իւր յատկութիւնքը անփորձ և անսասան պաշտպանել հակառակորդ դեպքերէն, և անյաղթ ախոյեան հանդիսացունել։

Արդ Հայոց ազգի այժմեան հանգամանաց նկատմամբ ո՞վ կարող է լինել նորա մի միայն կեդրոնը, եթէ ոչ ս. Էջմիածինը, մոռածելով՝ որ ս. Գրիգոր Պարթևի Հայաստանեայց երկրորդ լուսաւորչի և բարերարի Աթոռն է, որ ըստ երկրպագելի կամաց Մրածնին՝ հաստատուած է։ Զանզի ինչպէս ասացի, այսօր մի միայն կրօնքը լինելով մեր տէրը և պաշտպանը, չունինք և չենք կարող ունենալ այլ տեղ, որ մեզ ապաւէն և խնամող հանդիսանալու յարմար դատուի։

Բայց այս կեդրոնն արժան է հասկանալ՝ թէ ի՞նչ նշանակութիւն, ուստի և պէտք կ՚ունենայ։

Կեդրոնը կը նշանակէ որպիսի և իցէ մարմնոյ միութեան ամփոփման տեղ, յորմէ կը սկսի և կը զարգանայ միութեան նպատակը. և իւր բնութեանը պատշաճաւոր յատկութեանց կամ կանոնացը համաձայն կը յառաջադիմէ մինչև այն կէտը՝ ուր վերջապէս միութեան դիտումը իւր վախճանը կ՚ստանայ։ Ինչպէս շոգենաւը իբրև մի մարմին՝ իւր մէջ ունի մի կեդրոն միութեան, որ կարևոր և պիտանի գոլ ծիքներուն այսինքն՝ մեքենայից, հրոյ, շոգւոյ և այլն, միաբան և միակերպ օժանդակութեամբ՝ ունելով ինքեան նաև խիստ հարկաւոր և օգտաւէտ կանոն և կարգեր, ահագին ծովուց մէջ կը սահի, ամէն ալեաց ընդդէմ կը մաքառի անվեհեր, ոչինչ արգելք չէ կարող զինքն յաղթել՝ մինչև կը ժամանէ ուր իւր նպատակն է՝ քաջ առաջնորդութեամբ ներհուն և արթուն մի հսկողութեան։

Պէտք է այսպէս լինի և աղգային և կրօնական միութեան և էութեան պահպանութիւնը, և զայն օր ըստ օրէ զարգացնելով՝ ի պայծառութիւն յառաջադիմելը, ունենալով կեդրոն ս. Լուսաւորչի Հայրապետական Աթոռը. ուր ընտիր խորհրդոց հրահանգներով իւր կէտադրեալ նպատակը տեսանէ Աղգը, և վայելէ զայն բարոյապէս. . . ։

Ոչինչ կարող երբէք ուրանալ և ոչ — խոստովանիլ մեր երախտագիտութեան անհրաժիշտ պարտիքը առ Աթոռս առաքելական ս. Լուսաւորչին, եթէ կը ճանաչեմք զմեզ Նորին հարազատ և հաւատարիմ որդիք, որ առաւել Հայ Աղգութեան դառն և անհանդուրժելի միջոցները նորա մխիթարութիւնը եղած է. և իւր որդւոց Աղգութեան և Կրօնի անընկճելի և անվհեր միշտ պաշտպան և պահապան հանդիսացած է։ Ասոյ և իրաւամբ այսօր Հայը իւր Աղգութեան և ս. Կրօնին էութեան նախանձելի պարծանքը կը կրէ. թէպէտ ոչ սակաւ հալածանք՝ տառապանք՝ վիշտք և ցաւ ընդունելով. . . . ։

Որեմն եթէ կայ այժմ մեր Աղգային և Կրօնական պաշտելի յատկութեանց պահպանութեան և յարատևութեան կեդրոն մի, այն՝ Արարատեան առաքելական մայր ս. Աթոռ Լուսաւորչինը արժան է ընդունիլ։

Արդ ընդունելով մեզ կեդրոն Աղգութեան մայր ս. Լուսաւորչինը, անդէն կը պարտաւորուիմք յանձնել զմեզ նորին անհրաժեշտ և բարեդէտ խնամոց և հսկողութեանց, որով մեր՝ համայն Հայկազանցս մտաւորական՝ բարոյական. . յառաջադիմութեան և զարգացման ամենակարևոր պիտոյքը յուսալ՝ առնուլ և վայելել Նորին պարտաւորութեանց ճիշտ կատարման արգասիքէն։

Սակայն այս սուրբ կեդրոնն ևս աղատ չէ ծանր և խիստ կարևոր պարտաւորութիւններէ, ըստ որում իւր յատուկ

պաշտօնն է ոչ միայն մեր յատկութեանց
էութեան պահպանութեան և յարատև
զարգացման հսկել, այլ նաև ըստ այժ-
մեան ժամանակիս պահանջմանց՝ որպէս
հոգևոր ծնող՝ իւր որդւոց ներկայ սե-
ռնդոց արգասաբեր լուսաւորութեան և
դաստիարակութեան ջանալ, և ապագայ
սերնդոց միանգամայն և երջանկութեան
և պարծանաց փառաւոր առիթները
հիմնել և հաստատել։

Ուրեմն ս. Պ. Թռռը գիտէ՞ և կը ճանչ-
նայ իւր պարտաւորութիւնները և յա-
տուկ պաշտօնը — ուրեմն կը ջանայ և
գործադրել զնոսա —։

Պայ՛ն, սակայն տարակոյս չէ կարելի լի-
նել, ըստ որում շատ լաւ գիտէ՝ կը
ճանչնայ և կը ջանայ գործադրել իբրև
իւր առանձին և ինքնօրէն պաշտօն և
պարտաւորութիւն անաւանդ՝ ինչպէս վերա-
գոյն եւ յիշեցի, երբեք իւր ջանքը և ամեն
կարելի հնարքը չէ՝ զլացած և խնայած։
Ժամանակաց գառնակրիծ և անտա-
նելի բեռներն ներքին յառաջացած տա-
ռապանաց՝ վշտակրութեանց և հալածա-
նաց մէջ անդամ անելիք և հսկայա-
կերպ մատակարարած է իւր պարտքը
առ Հայ—որդիս։ Օրս պարզ և ակն
յայտնի կը քարոզեն հանապազ ազգային
այլ և այլ անցիւ յիշատակարանք և պատ-
մութիւնք։ Օրս ընթերցողք անհնարին
է՝ որ առանց յորդ արտասուաց և սրբ-
տաբուղխ հառաչանաց դիտել կարողա-
նան։

Ոչոհութիւն երկնից, տակաւ առ
տակաւ վերին՝ Լուսաւորութեան գթու-
թեան շնորհաց օծանգակութեամբ կ'ոչն-
չանան այն վիշտերը, որով առաուածա-
յին և աղգային սիրոյ միութեամբ՝ մեր
առաջն յառաջադիմութեան և լուսա-
ւորութեան, որով նաև 'ի բարիս զար-
գացման շաւիղ կը յարդարի։ և ս. Ս-
միածնի մեծ դիւրութիւնք և յարմար
միջոցներ կը պարգևեն երկինք, իւր բա-
րի խնամոց և պարտաւորութեց բարի և
մեծարելի նպատակները բացատրել և
գործադրել յօգուտ և յերջանկութիւն
ներկայ և ապառնի Հայ—սերնդոց։

Ո՞՛ր մարիտ Հայերը խանդակաթ սրբ-
տիւ այսպէս կ'ըղձանան, միայն ս. Ս-
միածնի իրաւատութեան տնօրէնու-
թեամբ և ինքնօրէն հոգևոր վարչու-
թեամբ ըստ արժանեոյն մեր Ազգային
և Կրօնական յատկութեանց գերազանց
փառաւորութիւն և յառաջադէմ եր-
ջանկութիւնը սփռեալ տեսանել ընդ
ամենայն տեղիս և կողմանս՝ ուր որ Հայ
որդիքն բնակուած են։ Լա՜ հետևաբար
ընթանալ դէպ 'ի այն բարոյական միու-
թեան. . . շաւիղը՝ ուր կը հորիզոնանա-
յին մեր նախնեաց բարենախանձ և ըղ-
ձալի պարծանքը և վսեմ վայելքը։

Արդեաք կ'ասեմ Ս-միածինը չէ՞
կարելի՝ որ առանց Հայկազանց կարևո-
րութիւն և նշանակութիւն ունենայ,
յորոց ունի անշուշտ՝ իւր գոյութեան և
այլ զանազան պարագայից կախումն։
Ասել է՝ թէ Հայք Ս-միածնի պիտի
օգնեն թէ՛ նիւթական և թէ բարոյա-

կան միջոցներով. որով Աստուածինը կը հանդիսանայ կարող լինելու 'ի գործդնել այն ամեն պարտաւորութիւնը, զորս վերը յիշեցի։

Ս.

(Ի յաջորդն վերջ)

ԿՐՕՆԱԿԱՆ

Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի վերլուծութիւն բանին Եսայեայ յեր որոյ եւ հաւամմունք ասուածաբանեցուն բանից բարգման յաւրինեալ ի խորհուրդ բազաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ բաւադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր ածեալ ձեռնա դրեցաւ բազաւորն Հայոց Մեծն Լեւոն.

,,Լուսաւորեաց գաւազան յարմատոյն Յեսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի։ Եւ հանգիցէ 'ի վերայ նորա հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան և հանճարոյ։ Հոգի խորհրդոյ և զաւրութեան։ Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան։ Եւ լցցէ զնա հոգի երկեղի Աստուծոյ,,։

Ակիզբն ամենայն տաւնից տերունականաց՝ Աստուածայայտնութիւն տաւն է. յորում աւուր յայտնեցաւ Աստուած՝ մարդ ծննդեամբ 'ի միշտ կուսէն, որ էրն և միշտ էն 'ի միշտ Լէն 'ի վեր քան զբան։ Լուեալ մարմին տիրապէս, և մնացեալ անմարմին իսկապէս, զմերս առեալ ստուգապէս, և զիւրն պահեալ անյեղապէս։ Բանն վանն մեր մարմին եղեալ, և ոչ փոխադրեալ, 'ի մարմին միացեալ, և անշփոթ մնացեալ, ոչ բաժանեալ և ոչ այլայլեալ, Աստուած 'ի կուսէ ծնեալ և մարդ կատարելապէս երևեալ, և նոյն ինքն Աստուած և մարդ խոստովանեալ։ Զամենայն ինչ զմարդկան անախտաբար կամաւորապէս կրեալ, և զնոսին յաղնուականութիւն ինքեամբ 'ի մեզ վերագրեալ. ոչ 'ի կրիցն տիրեալ, այլ գերագոյն նոցին 'ի կրելն կայեալ։ Ծնեալ և յանիծից զմեզ գնեալ ընծայեալ և զբնութիւնս մեր Հաւր Աստուծոյ նուիրեալ. Անկրքտեալ և զմեղս մեր ('ի) Յորդանանու լուացեալ. զփառակիցն իւր ըզ Հոգին ընկալեալ, և զնոյն առատապէս 'ի մեզ բաշխեալ։ Լոյս 'ի խաւար աշխարհի ծագեալ և զմեզ մթութեան մեղաց փարատեալ, կենարար վարդապետութեամբ զհոգիս մարդկան